ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4.2
«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ 22.08.2016թ. ԹԻՎ 371-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

28 նոյեմբերի 2016թ,
ժամը 10:30

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝**

Կ. Հակոբյան — Գլխավոր հաշվապահ

**Հանձնաժողովի անդամներ՝**

Ա.Սարգսյան — Հաշվապահության առաջատար հաշվապահ

Է. Գասպարյան — Հաշվապահ

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Մ. Եսայան — Գնումների համակարգող

**Օրակարգ**

«ՀԱՆ-ՄԵԼԾՁ-01/16» ծածկագրով մրցակցային երկխոսության գնման ընթացակարգի՝ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների բացում և գնահատում:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը հրապարակեց մասնակիցների որակավորման չափանիշների և տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքները՝ համաձայն գնահատման արձանագրության և բացեց բավարար գնահատված մասնակիցների գնային առաջարկներ պարունակող ծրարները՝ հայտարարելով յուրաքանչյուր մասնակցի գնային առաջարկը՝ ընդհանուր գումարով՝ հիմք ընդունելով տառերով գրվածը:

| **Գնահատման չափանիշը** | **Կազմակերպության անվանումը** | | | |
|---|---|---|---|---|
| | **«Ջեներալ Ստանդարտ Քընսալթինգ» ՍՊԸ** | **«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ** | **«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ** | **«Ասատրյանս» ՍՊԸ** |
| ***Գնային առաջարկ (ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ)*** | **19 200 000** | **22 800 000** | **21 720 000** | **8 820 000** |
| ***Մասնակցի որակավորման հայտանիշներին և տեխնիկական առաջարկին տրված միավոր*** | **80** | **90** | **80** | **95** |
| ***Մասնակցի գնային առաջարկին տրված միավոր*** | **46** | **39** | **41** | **100** |
| ***Ընդհանուր միավորներ*** | **126** | **129** | **121** | **195** |

Համաձայն հրավերով սահմանված կարգի՝ տեխնիկապես բավարար գնահատված յուրաքանչյուր մասնակցին տրվող գնահատականը հաշվարկվեց հետևյալ բանաձևով՝

ՄԳ = (ԳՄ X 0.7/100) + (ՏԱ X 0.3/100),
որտեղ՝

ՄԳ-ն մասնակցին տրվող գնահատականն է,
ԳՄ-ն մասնակցի գնային առաջարկին տրված միավորն է,
ՏԱ-ն մասնակցի որակավորման հատկանիշներին և տեխնիկական առաջարկին տրված միավորն է:

Ստորև ներկայացված են յուրաքանչյուր մասնակցի գնահատման արդյունքները.

**«Ջեներալ Ստանդարտ Քընսալթինգ» ՍՊԸ՝**
ՄԳ=(46x0.7/100)+(80x0.3/100)=0.56

**«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ՝**
ՄԳ=(39x0.7/100)+(90x0.3/100)=0.54

**«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ՝**
ՄԳ=(41x0.7/100)+(80x0.3/100)=0.53

**«Ասատրյանս» ՍՊԸ՝**
ՄԳ=(100x0.7/100)+(95x0.3/100)=0.99

Գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ գնային առաջարկները գերազանցում են Ընկերության կողմից սույն գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

**Գնահատող հանձնաժողովը միաձայն որոշեց՝**

1. Ընտրված մասնակից ճանաչել «Ասատրյանս» ՍՊ Ընկերությանը:
2. Հայտարարել անգործության ժամկետ՝ www.gnumner.am կայքում տեղադրելով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն: Անգործության ժամկետ սահմանել հինգ օրացուցային օր:
3. Ընտրված մասնակցին օրենքով սահմանված կարգով առաջարկել կնքել պայմանագիր՝ անգործության ավարտից հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում:

| | |
|---|---|
| Կ. Հակոբյան | Հանձնաժողովի նախագահ |
| Ա.Սարգսյան | Հանձնաժողովի անդամ |
| Է. Գասպարյան | Հանձնաժողովի անդամ |
| Մ. Եսայան | Հանձնաժողովի քարտուղար |